

### **3. ԱՐԱՐ ԱՇԽԱՐՋԻ ԳԵՂԵՑԿՈՒՅՔԻՆ (Դունյա գյուղալի)**

Մեկ քաղցիմ՝ մեջ դուֆարեմ՝ կեր, եղ դուֆարեն մշտական կ'երթեր,  
մեշի միջեն փետ կը բերեր շալկով, տաներ մեյտան, կը ծախեր մեկ դու-  
րուց փարի, խաց կառներ, կը բերեր, ինըն ու ուր կնիկ կուտին: Մեկ  
ամիսմ՝ էրկուս եղ քյազալըկին գնաց, եկավ: Ավուր մեկին գնաց շալաքմ՝ ել  
պտի բերեր, եկավ մեշի մեջ տեսավ որ, ծառի գլխուց խավըմ թռավ, ասեց.  
«Ամ՛եպ, եղ խավըու տեղ բանմ եղի, չեղի. մեկ էլիմ, տեսիմ. բան կա»: Ան,  
թի չկա»:

Ելավ. տեսավ, որ մեջ խատ ծում կեր էնտեղ, առավ են ծուն, եկավ.  
վերցեց էլման ուր շալաք փետ, բերեց մեյտան, ծախեց. և դրուն ծուն  
առավ ծեռաց մեջ. «Վալլա՛հ, չեմ ուտեր, եսա ել պտի ծախեն», - ասաց:

Ասելու քիմին յահուդիմ են տեղացեն ելավ, եղավ եղա ծվին  
մուշտարի:

Դուֆարա, - ասաց յահուդին, - ի՞նչ ա եղա քո ծվի գին:

- Ինչ որ կամի, են տո՞ւր, - ասաց դուֆարեն:

- Տամ քեզ չորս խարիր դուրուց:

- Չեմ գիտեր, յահուդի, - ասաց դուֆարեն, - Վոր ընծի կու ծըծղաս,  
դուֆարա եմ դո՞ւց. աժող գին տո՞ւր:

- Տամ քեզի խինգ խարիր դուրուց:

- Խան տուր, - ասաց:

Խանեց յահուդին փարեն տվեց: Յահուդին առավ ծուն, դենա փա-  
խավ, դուֆարեն փարեն մեկ դեխ առավ, փախավ:

Խլուսուն դուֆարեն մեկ էլ էլավ. գնաց մեշեն. առավ շալաք փետ ու մեկ ծու, էման էկավ: Բերեց մեյտան, էման տվեց յահուդուն, տվեց խազար դուրուշ, առավ: Առավ էկավ, փարեն տվեց կնկան:

Կնիկն ասաց. - Մարդ. խիճ խարիր դուրուշ էրեկ բերեցիր, խազար դուրուշ էլ եսօր բերեցիր, էսոնք ո՞ւստա ին:

- Կնիկ, - ասաց մարդն, - կերթամ մեշեն, ծառի գլխուն խավըմ կա, խավը կու թռնի, ծուն կը բերեմ, մեյտան կը ծախսեմ:

Կնիկն ասաց. - Կերթաս ծուն կը բերես, խավը կը թռի, կերթա. քո ջան քեզի ցավ չտա՞ր. էլիր գնա, զեն խավըն էլ թռնա, բեր:

Մարդն գիշերանց էլավ, գնաց: Խասավ մեշեն, հուշիկմ բանձրցավ էն ծառի գլոխ, տեսավ որ խավը քնուկ էր, առավ զխավըն, մեկ խատ էլ ծու ածըցեր էր, զծուն ու էկավ:

Եղ քյազալըրին. Եղ խավըն էլ հօր մե խատ ծու կածեր. Եղ դուֆարեն էլ օրական ծուն կը տաներ եղ յահուդուն, կը ծախսեր, որ ավուր էվելի գնով:

Դուֆարեն շատ անթիվ ուրին փարա ժողվեց. Էս դրուն բերեց ուր խիճ տներ բլուց. ուրին թաժա տներ շինեց: Էտոր մեջն իրեք-չորս տարի ընցավ, էրկու խատ տղա էլավ էր մարդուն: Տղեկներ որ քչում մենձըցան, մեկ օր մարդն ասաց կնկան. - Կնիկ, տղեկներն էլ, խավըն էլ քեզի թաս-լիմ, ես կերթամ երուսաղեմ:

- Ապա էղա խավու անուն ծիկ չասեցիր ի՞նչ ա, - ասաց կնիկ:

- Կնիկ, եղ խավու անուն խավիզ ա, խավիզ ասած՝ շատ գին ունի: Չենին չեղմի, իմ խավուն ծեռ տաս: Մուլաք կեցիր, չուրմ գամ. ծվերն էլ էման կը ծախսես յահուդուն, փարեն կառնես:

Են տեղացեն մարդ բարձեց ու գնաց: Են մեկել օր որ յահուդին էկավ, ծուն պտի առներ, էնգախ կնկա սիրտն ընկավ էլ յահուդին:

Կնիկն ասաց. - Ընծի կառնես, ծուն կուտամ. չե՞ս առնե, չե՞մ իտար:

- Որ դու խավըն մորթես, էնոր միսն ես ուտեմ, կառնեմ, - ասաց յահուդին:

Կնիկ խոսք էտուր. յահուդին որ ծուն առավ, գնաց. կնիկ էլավ զխավը մորթեց. գլոխն էլ ջիկարն էլ, ջանդակն էլ դրեց պատուխան:

Մնաց որ տղեկներ դուս էկան, ասին. - Մարե՛, մենք անորի ենք:

- Լառ, իրեք խատ միս եմ դրե պատուխան, են ջոջ մի առեք, են պատկներ առեք, կերեք:

Տղեկներ գացին դրխ պատուխան. գլոխը ջոջ տղեն կերավ, ջիկարն էլ պտտի տղեն կերավ ու էլան, սրախի մեջ կայնան: Իրիկուն յահուդին

Էկավ, կնիկ դուք դրեց տղեկներու վրեն, տարավ խավքու միս դրեց յահուդու առջև, յահուդին որ ջանդակ մինակ տեսավ, խարցուց.

- Ո՞ւր ա եսօր գլոխն ու ջիկյար:

Տղեկներ սրախ կայնած են՝ ականջ կինեն, կնիկն ասաց. - Տղեկներն են կերած:

- Որ էմալ ա, - ասաց յահուդին, պտի տղեկներ մորթես, են ջիկյարն ու գլոխ բերես, ուտեմ, նոր քեզի կառնեմ. ես խավք տվի մորթել գլոխն հապով, ջիկյարն հապով:

Կնիկն ասաց. - Թող էղի, կը մորթեմ:

Ենգախ տղեկներ եղ խըսեն լսեցին, էլան դուս, ջոջն ասեց պատկին.

- Մեր մեր մեզի պտի մորթա. իրիկուն որ կը քննենք, են գախ կասես. «Ես կը պոզեմ, մենակ կը վախենամ, դու էլ արե խըտ ընծի», որ կէլմենք դուռ, թորկենք, էրթանք:

Սացին չուրմ իրիկուն, պտի քնին. պատիկ աղբերն ասաց.

- Մարե, ես պտի պոզեմ, մինակ կը վախնամ. չեմ կանա էրթա:

Մեր ջոջ տղին ասաց. - Դու էլի՛, գնա խետ:

Էրկու աղբերն էլ որ դուս էլան, բռնեցին մեկ ճամբախ ու գացին: Մեկ խելի տեղ որ գացին, պատի աղբեր ճամբխուց դուս էլավ պոզելու, ջոջն ասաց.

- Ես հուշիկ-հուշիկ կէրթամ, արե՛, ծիկ խասի:

Եղ տեղացեն ճամբախն էղավ էրկու ճամբախ, աղբըրտանք իրար կորուսին. էլ չկարցան զիրար գտած ին. մեկ աղբեր մեկ ճամբխով գնաց, մեկ աղբեր մեկել ճամբխով՝ գիշեր տվեց վրեներ, էղոնք ճամբխուց դուս էլան. ամեկ ուր տեղ՝ քարիմ տակ պարկան:

Պատիկ աղբեր թըխ էն տեղ պարկուկ մնա. մենք դառնանք վըր ջոջ աղբոր:

Ջոջ աղբերն էր, խըլըսուն լուսն որ քացվավ, էլավ ընկավ ճամբախն ու գնաց: Չատ ու քիչ գնաց, Աստված գիտա, գնաց, խասավ մեկ քաղքիմ, տեսավ որ եղ քաղքի թագավոր մեռեր ա, դավլաթ-դուշի ին թորկեր ին: Տղեն էլ գնաց, մոտեցավ, դավլաթ-դուշին թորկելու քիմին՝ էկավ, նստավ տողի գլխու վերեն:

Եղ քաղքի մախլուխն ասեցին. - Զանըմ, էղա դարիա տղեն ի՞նչ ա որ, գա մեր քաղքի մեջ թագավոր էղնի:

Տփեցին, մլեցին դուս: Դավլաթ-դուշին գինա մեկ էլ թորկեցին. գինա պտոտեց, գնաց քաղքից դուս, տողի գլխուն նստավ: Իրեք խետ թորկեցին

իրեք խետ էլ էկավ, նստավ տղի գլխու վերեն: Բերեցին, տղեն երին  
թագավոր:

Դառնանք վըր տղեկներու խոր վերեն:

Խերն Երուսաղեմա էկավ տուն, տեսավ որ խավըն ու տղեկներ չկամ.  
Կնկա ըորդավ, առավ ճամբախմ առեջ. ու թորկեց, գնաց: Գնաց մեկ  
քաղըին մեջ. մեկ քագավորիմ՝ էլավ սայիս:

Դառնանք վըր պզտիկ աղբօրն: Պզտիկ աղբերն էլ իմցավ, որ լուս  
բացվեր էր: «Դե՛յ վախ, - ասեց, - էլ աղբերս չեմ կանա գտներ»:

Անձար, անորի, ծարավ էլավ, թորկեց ու գնաց: Շատ ու թիզ գնաց՝  
Աստված գիտա. գնաց՝ մեկ քաղըին ըրասթ էկավ, մեյտնի մեջ տեսավ որ  
դասապչին օխչար կը մորթեր, շատ կանավ, աչքեց. ղասապչին խարցուց.

- Տղա, մշակ կեղի՞ս:

Ասաց. - Կեղիմ:

Ղասապչին վերցեց տղին, տարավ ուր դուքան. ամիս մեկ մաճիթյա  
հախ կտրեց: Էն գիշեր տղեն քնավ դուքանի մեջ. ղասապչին գնաց տուն:

Խըլըսուն ղասապչին շուտ էկավ, տեսավ որ տղեն քնուց էլե վեր,  
չորս-խմն օխչար մորթե, խստըկե, կախս էն տեղացեն: Ղասապչին շատ  
ուրախցավ, ասաց. - Էսա կտրիծ տղա յա, կը պախսեն քովս:

Մնաց չուրմ իրիկուն. ղասապչին քսան խատ օխչար առավ, թերեց,  
էրաց դուքանի մեջ. ու դուր փակեց վըր տղին, թորկեց, գնաց: Տղեն էլավ,  
ծրագ կպուց. մեկ խատ օխչար թերեց: Մորթեց, քրթեց, սերսփեց, կախսց  
պատեն, էկավ քչում պարկավ: Շիտկավ, տեսավ, որ բարձի տակ քիսիկմ  
փարա դորուկ էր. ուրախցավ, վերցեց: Էն գիշերվան մեջ, էն քսան օխչարն  
էլ մորթեց, քրթեց, կախսց պատից: Ամեկ օխչար քրթելուն որ կը պարկեր,  
մեկ քիսկ փարա կը վերցեր ուր բարձի տկեն: Տղեն էն փարեք որ տեսավ,  
ինք ու ինը ասաց. - Խըլըսուն էլ ղասապչու կուշտ չըմ կանիր:

Խըլըսուն ղասապչին որ էկավ, էն խտար յալվար ընկավ, տղեն չկայ-  
նավ, թորկեց, գնաց: Գնաց էն քաղըի միջի մեյտան, տեսավ հոր մարդու մի  
մեկ՝ օխչար կը ծախտեր: Առավ էն օխչար, մորթեց ու քրթեց, տարավ քաղ-  
ըի դարկըիկ պատեն կախսց: Էղտեղ մեկ քսան օր բարլամիշ էրաց, ո՞ր  
էկավ միս առնելու, տղեն չժախտեց ուր միս: Տղեն գիտեր փարեն օխչրից  
էր, չգիտեր որ ուր գլխու տկեն կելեր: Խոլասա էղտեղ էն ջանդակն խո-  
տավ: Քաղըի մարդիկ գացին գանգատ էն նեխուկ մսի խամար, նոր էկան  
մեծավորներ, էն ջանդակ թալին շներու առեջ, տղին էլ քաղըից մլեցին  
դուս, գնաց:

Տղեն շատ ու թիզ գնաց, Աստված գիտա, խասավ մեկ քաղըին մեջ,  
գնաց ճանկմ օսկի տվեց պառավուն, խոնախ էլավ: Էն պառվու տան մեջ

մեկ տաս-քսան օր մնաց: Տղեն օրմ դուքներու մեջ կը պտոտեր. խապար առավ որ եղտեղ Դունյա-գյիւզալի կա, ասեց. - Երբամ թամաշա էնիմ:

Գնաց Դունյա-գյիւզալու փամճարի տակ կայնավ. եղ տեղ տեսավ որ սանտմ կեր, մեկ խատ մարդ էլ եղ սանտի կուչտ կայնուկ էր. տղեն խարցուց եղ մարդու մոտեն, թի. - Եսա ի՞նչ սանտ ա:

Մարդն ասեց. - Որն օր եսա սանտն իլին օսկի լցա, կերբա Դունյա-գյիւզալու կուչտ, կը նստի, կուտա, կը խմա, կը պարկի:

Տղեն եղ խոսքն որ լսավ դարձավ գնաց, փարեն առավ, էկավ: Սանտ իլին օսկի լցեց, զլխվավ, խապար խասավ Դունյա-գյիւզալուն. թի ես թավուր տղեն, սանտ իլին օսկի լցեց:

Դունյա-գյիւզալին ասաց. - Ես խնտար թագավորի տղա, վազիրի տղա, չկարցան եսա սանտ լցած ին. եղ ի՞նչ տղա յա որ, եսա սանտ լցեց:

Խանչեցին, տղին առան, էկան Դունյա-գյիւզալու կուչտ:

Դունյա-գյիւզալին խարցուց. - Ես խնտար փարեն քեզ ո՞ւստ ա:

Տղեն ասաց. - Ես խավիզու խավըու ջիկյար եմ կերեր եմ:

Դունյա-գյիւզալին ասաց. - Տղա՛, ես քեզի, դու ընծի:

Նոր նստան քեֆ, ուրախուրեն արեցին: Դունյա-գյիւզալին խանչեց աղջկներուն, գողտուկ ասաց. - Բերեք ընծի յոթ տարվան գինին:

Գինին բերեցին, շատ խնցուցին, տղի խելք վերևսեն գնաց. նոր էլան, տղին ձձնի պես տարան ու բերին, ջիկյար բերնեն էկավ, ընկավ, տղեն թալեցին դուս:

Լուսցավ, տղեն մեկել օյամմիշ եղավ որ, փողնի մեջ պարկուկ ա, շիտկավ, տեսավ որ փարա չկա զլխու տակ. վալլա՞հ, ասաց, ջիկյար առած ա:

Տղեն եղ տեղաց, են քաղքեն դուս էլավ ու գնաց, խասավ ծովում քնար, մտավ գյամին, էլավ մեկ ատեմ՝ դուս: Գնաց պտոտեց, տեսավ որ եղ տեղ մեշա կեր, մտավ մըզ մեշին, աչքեց որ ծառեն թուզմ կախուկ էր, առավ եղ թուզ, կերավ: Ուտելու քիմին տղին էրկու խատ կոտոշ թուսան:

- Եղ ի՞նչ պատիճ էր, - ասաց տղեն:

Մեկ աչքեց որ ուրիշ ծառեմ էլ խնձոր կախուկ էր, առավ խնձորմ՝ կերավ, կոտոշներ կուրիսան: «Եսա աղեկ էլավ», - ասաց տղեն, ու քաղեց մեկ խատ թուզ, մեկ խատ էլ խնձոր, էլավ, էլման մտավ գյամու մեջ. դարձավ, էկավ Դունյա-գյիւզալու քաղաք: Խնձոր դրեց ջեպ. թուզ առավ ձեռ ու ըսեց. - Թո՞ւզ կու ծախիմ, թո՞ւզ, - ու պտոտաց մըզ քաղքին, էկավ Դունյա-գյիւզալու փամճարի տակ:

Դունյա-գյիւզալին որ լսեց, ասաց. - Աղջի, գացե՛ք, են թուզ բերեք, ես ուտեմ:

Աղջկներ էկան, տղից գնեցին թուզ, առան գացին: Թուզ որ կերավ Դունյա-գյուղալին, էրկու խատ կոտոշ թուսավ վըր գլխուն. առավ մեկ էն պատ, մեկ էն պատ: Տղեն էլ փախավ, գնաց:

Դունյա-գյուղալին ինչ խտար փարա որ ժողվեր էր, հմեն խրճեց, չկարցավ ուրին ճար մի էրեր ի:

Սեկ վաղբն մնաց. տղեն գնաց փողցներուց թուղթ ժողվեց, մեկ խատ գիրքմ շինեց. էկավ Դունյա-գյուղալու փանճարի տղկով ընցավ, ըսեց. - Ճեքի՞ն իմ, հեքի՞ն:

Դունյա-գյուղալին որ լսեց, աղջկներ ճամբխեց, տղին առան, գացին ներս: Տղեն գիրք շրջեց դեն, շրջմրջեց դեն, կիսեց խնձորից կտորմ, տվեց Դունյա-գյուղալուն, կերավ, ուտելու քիմին կոտշներ պատից դուս էլան. էկան մոտեցան: Տղեն ասաց. - Դունյա-գյուղալի, իմ գիրք կասա. «Դու մեկ երում տղիմ տուն ավիրեր ես. չուրմ էնոր ջիկյար չիտաս, կոտշներ չըն կարծի»:

- Խա, - ասաց Դունյա-գյուղալին, - ես մեկ տղիմ տուն ավիրեր եմ, էնոր մեղաց տակ ընկեր եմ:

Նոր տղեն բերեց յոր տարվան գինի, խմցուց Դունյա-գյուղալուն՝ ծձմի պես տարավ, բերեց. ջիկյար մոտեն առավ. ապա խնձոր թամամ կերցուց, կոտշներ կուրիսան:

Դունյա-գյուղալին որ կոտշներուց ազատավ, տղին ասաց. - Ես քեզի, դու ընձի, եստեղ նստենք, ուտենք խմենք:

Էլման նստան, կերան, խմեցին. Դունյա-գյուղալին թաքրար խարեց, տղի խելք գլխեն տարավ. մեկ էլ ջիկյար մոտեն առավ ու տղին թալեց դուս:

Լուսցավ. տղեն էլավ, որ ջիկյար չկա, ասաց. - Վա՞յ, վա՞յ, Դունյա-գյուղալին գինա ընձիկ խարեց:

Տղեն էլավ փոռ-փոշման տվեց ճամբախս առեցն ու գնաց: Գնաց ճամբխու վերեն. տեսավ որ իրեք աղբեր խըտ իրար կոիվ կենին, խարցուց, թի. - Ետ ի՞նչ կոիվ կէնիք:

Են մեկ աղբեր վերցեց, ասաց. - Աղբեր, մեր խոր մալից իրեք քան խասավ մեզի՝ մատնիքմ, չպուսմ ու քոլոզմ, մկա խըտ իրար չընք քարիշի. էն կասա հնձի, ես կասեմ՝ հնձի, դու աղեկ հանդիպար. արե, մեր մալ կիսի:

Տղեն խարցուց, թի. - Զեր մալեր ի՞նչ խունար ունին:

Էնոնք էլ ասացին. - Եսա մատնիք որ օլրես, էրկու արապ կէլին մի-քեն, որ ասես՝ ավիրեք՝ կավիրեն, որ ասես՝ շինեք, կը շինեն: Եսա չը-պուսն էլ որ զանես գետին, ասես. Եսա քաղաք վերցուր տար ֆլան

ատեն, էն սհարուն կը տանա: Քոլոզին էլ էն խունար կա որ, որ դնա գլոխ՝ գլոխ կեղի աներևութք:

Եղ որ խասկրցավ տղեն, իրեք խատ քար առավ ծեռք. թալեց, ասեց. - Էսա քարեր թալեցի, որն որ առեց առավ էկավ, մատնիք կուտամ, էնոր հետև՝ չպուխ, հմնու հետ էկողին էլ քոլոզ կուտամ:

Տղեն քարեր որ թալեց, էնոնք վազան հետև, ինք քոլոզ դրեց գլոխ, սըր էղավ: Աղբրտանք փոռ-փոշման թողին գացին:

Տղեն առավ էղա թաներ, էկավ, գնաց Դունյա-գյիւզալու քաղքի մեջ, էնոր սարի մոտ կայնավ. չպուխ զանեց գետին, ասեց. - Չըպուխ, քեզնե կուզեմ էսա սարեն, Դունյա-գյիւզալին էլ խետ, էն ծովու ատի մեջ խանես:

Ասել քիմ՝ սարեն Դունյա-գյիւզալին էլ խետ, էն ատի մեջ դրվավ: Դունյա-գյիւզալին մեկ էլ աչքեր թացավ, տեսավ որ ատի մեջ նստուկ ա:

Տղեն քոլոզ խանեց գլխուց, ասաց. - Դունյա-գյիւզալի, քո մարդ ճանչցա՞ր:

- Խա, - ասաց Դունյա-գյիւզալին, - ըսդով էն դեն խոսք կուտանք, էղինք իրար:

Խոսք ու խրար տվին, իրարու խետ էղովրան:

Մեկ քյանիմ օր ընցավ, Դունյա-գյիւզալին սատանութենով խարեց, տղից մատնիք, քոլոզն ու չըպուխ առավ: Չպուխ զարկեց գետին, ասաց. - Չըպուխ, քեզնե կուզեմ որ, էսա սարեն գինա ուր տեղ նստի, տղեն մնա էսա տեղ:

Սարեն՝ Դունյա-գյիւզալին էլ խետ, վերցվավ, թաքրար դրվավ ուր տեղ:

Տղեն մեկ էլ աչքեր թացեց որ, մինակ ա մացի: Էլավ պտուեց մեր ատին, տեսավ որ մեկ խատ եմիշմ ծաղից կախուկ էր, փրժուց, կերավ. ուստեղու քիմիմ՝ էղավ խեռսողաց, մեկ էշմ. էն տեղացեն խնձորմ էլ փրժուց կերավ, էլման էղավ իսան:

Տղեն առավ գետ եմիշն ու խնձորն, նստավ գյամին, ընցավ էն յան ու դեմ էրեց Դունյա-գյիւզալին ու էկավ: Խասավ քաղքի մեջ, էլման եմիշն. առավ ծեռ ու զնաց Դունյա-գյիւզալու փանճարի տկով ընցավ, ասեց. - Եմիշ կը ծախսեմ, եմիշ:

Դունյա-գյիւզալին ճամքիսեց աղջկներուն, առան եմիշն, էկան:

Դունյա-գյիւզալին որ կերավ էղավ, մեկ խատ էշմ: Աղջկներ տփեցին Դունյա-գյիւզալուն, մլեցին դուս: Տղեն դուռ կայնուկ էր, առավ գէշն ու զնաց: Գնաց տեսավ որ խալիվորմ շալկով խող կու կըրե, ասաց. - Պապե, ընչի շալկով խող կը կրես, արե էսա էշ կուտամ քեզի. հըմա՝ ոչ խլավցուցես, ոչ խատուցես. ամեկ կուշտ էրկու տեղով յարա թանաս:

Պապեն էշ առավ, գնաց, տղի ասածի պես արաց. խող կրելուց որ պրծավ, էշ թորկեց:

Եղ քաղը մեջ էլ սովորութեն կեր, թագավորի սաղի մոտեն զընծիլ կախուկ էր. ինչ մարդ զանգատ էրթեր, կերթեր զնծիլ մոտ կու կաներ, ծեռ տեր զնծիլ, զնծիլ մոտեն ծեմ կէլեր: Կը բռնին, կու տանին, կու խանին թագավորի էրես:

Եղ էշն էլ պտուտալեն գնաց, քամակ տվեց եղ զընծլին, ծեն էլավ զընծլից:

Են գախ թագավոր խանչեց, ասաց. - Տեսեք, եղ ինչ գանգտվոր ա:

Էկան տեսան, որ էշն ա: Գացին ասին, թի. - Թագավոր ապրած, էրկու տեղով յարալի, զապուն էշն ա:

Թագավոր ասաց. - Խարցուցեք, տեսեք եղ իշուն ո՞րն ա թանցուցեք:

Թալալ տվին խանչել, խալիվորն գտան, առան էկան: Թագավոր խարցուց. - Խալիվոր, դու Ասուց չվախնեցա՞ր, եսա իշու գլոխ ի՞նչ ես երեր ես:

- Թագավոր ապրած, - ասաց խալիվոր, - տղի մեկ էղ էշ տվեց զնծի:

Ասու սուր թալեց, ասաց. - Ոչ խատուցես, էրկու կուշտն էլ յարա քացես:

- Դու էն տղեն կը ճանչընա՞ս, - խարցուց թագավոր, - զնա, թեր:

Խալիվոր զնաց, տղին գտավ, առավ էկավ: Տղեն թագավորի առեց ճախլ էրաց, ինչ որ ուր գլխուն էկեր էր: Են տեղ թագավոր իմցավ որ էտի ուր աղբերն ա. խերն էլ որ էղեր էր սեյիս. են էլ իմցավ որ տղեկներ ուրն են:

Նոր առան էկան գէշ. տղեն խնձոր կերցուց, էրաց էլման Դունյագյիւզալի: Թագավոր թերեց Դունյա-գյիւզալուն պսակեց Վըր աղբոր, խերն էլ սայիսութենից խանեց, թերեց ուր կուշտ, ժողվան Վըր իրար, յոթն օր, յոթ գիշեր, յոթ ցերեկ, դումբ զանին. խարսնիս էրին, էնոնք խասան ուրանց սրտի մուրազին, դուք էլ խասնիք ծեր մուրազին:

